ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

29 դեկտեմբերի 2014 թ. **N 123-Ա**

«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 112-րդ հոդվածի,<<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի թ) ենթակետի դրույթներով և համաձայն <<Գորիսի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ս.Ամիրյանի անձնական դիմումի,**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1.2014թ. դեկտեմբերի 29-ից լուծել <<Գորիսի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սլավիկ Ամիրյանի հետ 2012թվականի նոյեմբերի 12-ին կնքված N 14 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդված, Ս.Ամիրյանի անձնական դիմումը:

2.<<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

3.Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կոզմանով Կառլեն	մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Գևորգյան Նունե	մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Ծատրյան Արման	մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ
Ամիրյան Սլավիկ	<<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ նախկին տնօրեն, հանձնող
Իվանյան Նորա	<<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ընդունող:

4. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2014թ.դեկտեմբերի 29
ք. Կապան